ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թվականի հոկտեմբերի 25-28-ը ք. Բեյրութ

(Լիբանանի Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Սուրեն Կարայան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Գործուղման վայրը՝ ք. Բեյրութ (Լիբանանի Հանրապետություն)

Գործուղման ժամկետները՝ 25.10.2017- 28.10.2017

4. **Հրավիրող կողմը**

Լիբանանի Հանրապետության պլանավորման հարցերով պետական նախարար

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Սուրեն Կարայանի գլխավորած պատվիրակության Բեյրութում կայանալիք հայ-լիբանանյան գործարար համաժողովին մասնակցելու նպատակով, ինչպես նաև Լիբանանի պետական մարմինների ղեկավարների հետ՝ Հայաստանի և Լիբանանի միջև առևտրատնտեսական համագործակցության հեռանկարները քննարկելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները**

Համաժողովի ընթացքում նախարար Սուրեն Կարայանն հանդես է եկել ելույթով և իր խոսքում ընդգծել է, որ ՀՀ կառավարությունն ունի հստակ մոտեցում Հայաստանում ներդրումներ իրականացնող գործարարների նկատմամբ, այն է՝ ամբողջական աջակցություն ներդրողին:

Նախարարը պատասխանել է գործարարներին հետաքրքրող հարցերին Հայաստանում բիզնես գործունեություն ծավալելու վերաբերյալ:

Պետական կառույցի ներկայացուցիչներին, գործարարներին և համաժողովի պատվիրակներին է ներկայացվել Հայաստանի ներդրումային և գործարար միջավայրը: Զեկույցով հանդես է եկել նաև KPMG ընկերության Ռուսաստանի ու ԱՊՀ մյուս երկրների գործընկերների խորհրդի անդամ Վիկտոր Ակուլյանը՝ ներկայացնելով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության հետ ավելի վաղ կնքված հուշագրով նախատեսված Հայաստանի ներդրումային հնարավորությունների վերաբերյալ KPMG-ի ուղեցույցը:

Լիբանանցի ներդրողներին հատկապես հետաքրքրել են Հայաստանի ազատ տնտեսական գոտիների ընձեռած հնարավորությունները, ոսկեգործության և զբոսաշրջության ոլորտները:

Կայացել են գործարարների միջև B2B հանդիպումներ:

Համաժողովի աշխատանքներին մասնակցել են շուրջ 200 գործարարներ Լիբանանից և Հայաստանից:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Նախարար Սուրեն Կարայանի գլխավորած պատվիրակությանը Բեյրութում ընդունել է Լիբանանի Հանրապետության նախագահ, գեներալ Միշել Աունը: Նախագահ Աունը բարձր է գնահատել հայ-լիբանանյան հարաբերությունները՝ կոչ անելով ամրապնդել դրանք բոլոր ուղղություններով, հատկապես տնտեսական ոլորտում:

Լիբանանի նախագահը կոչ է արել երկու երկրների գործարարներին ակտիվ համագործակցել միմյանց հետ, նշելով, որ լիբանանահայերը կարևոր դեր են խաղում Լիբանանի և Հայաստանի միջև հարաբերությունների ամրապնդման գործում:

Սուրեն Կարայանն իր հերթին ընդգծել է տնտեսական համագործակցության կարևորությունը, ներկայացրել է ներդրումային հնարավորությունները, Հայաստանի արտաքին տնտեսական համագործակցությունն ու թիրախային շուկաներում առկա հնարավորությունները:

Նախարար Սուրեն Կարայանը Լիբանան կատարած աշխատանքային այցի շրջանակներում հանդիպել է Լիբանանի Հանրապետության զբոսաշրջության նախարար Ավետիս Կիտանյանի հետ:

Սուրեն Կարայանը, ՀՀ ՏԶՆՆ Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյանը և Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Խզմալյանը Ավետիս Կիտանյանի հետ քննարկել են զբոսաշրջության ոլորտում Հայաստանի և Լիբանանի միջև համագործակցության ակտիվացմանը նոր թափ հաղորդելու ուղիները՝ հաշվի առնելով Երևան-Բեյրութ ուղիղ չվերթների առկայությունը: Նախարարներն ընդգծել են, որ զբոսաշրջության զարգացման գործում շատ օգտակար կարող է լինել երկու երկրների փորձի և անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը:

Կողմերը քննարկել են դեպի Հայաստան լիբանանցի զբոսաշրջիկների այցելություններն ավելացնելու հնարավորությունները, ընդ որում՝ ոչ միայն ծագումով հայ: Լիբանանի զբոսաշրջության նախարարը նշել է, որ շատերը Լիբանանում անհամբերությամբ սպասում են «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» երթուղու մեկնարկին:

Հանդիպման ընթացքում Հայաստանի և Լիբանանի զբոսաշրջության ոլորտի պատասխանատուներն անդրադարձել են նաև երկկողմանի լրագրողական այցելությունների կազմակերպմանը:

Հանդիպման ավարտին նախարար Կարայանը Ավետիս Կիտանյանին հրավիրել է Հայաստան:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի ընթացքում հուշագիր է ստորագրվել երկու երկրների առևտրաարդյունաբերական պալատների միջև երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման և գործարար շրջանակների աշխատանքների դյուրացման նպատակով:

Մեկ այլ համագործակցության հուշագիր է կնքվել արդյունաբերական ոլորտում AC Holding լիբանանյան և հայկական ընկերությունների միջև:

10.Գործուղվողը

Սուրեն Կարայան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

14.11.2017թ.